ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE8A-E2B1-48A3-BEC3 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/0711/02/26 | ք. Երևան
30 Հունվարի 2026թ

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Մխեյանի, քննության առնելով ԵԴ2/0711/02/26 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑ

«ՏՆՄ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ներկայացուցիչ Լևոն Օհանյանի, հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի՝ հայցելով անվավեր ճանաչել (վերացնել) «ՓԱՐԿԻՆԳ ՍԻԹԻ ՍԵՐՎԻՍ» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ-ի կողմից՝ «ՏՆՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 25.12.2025թ.-ին կայացված թիվ Ո-01 որոշումը:
Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը ներկայացված է ՔԴՕ 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան և բացակայում են ՔԴՕ 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:

Դատարանն արձանագրում է, որ ներկայացված հայցը ենթակա է քննության ՔԴՕ 27.2 գլխի կանոններով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով ՔԴՕ 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է պատասխանող «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Պատասխանող «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Պարզաբանել կողմերին, որ՝
- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.
- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառ-ներով:
- Հայցադիմումի պատասխանը կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
- գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:

- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

4. Եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր սահմանել 02.03.2026 թվականին:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by MKHEYAN DANIEL 2908790114
Date: 2026.01.30 13:47:38 AMT

Դատավոր՝ Դանիել Մխեյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am